

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐՔԵՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՒՋԻՆ  
ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

2011 թվականի հուլիսի 28-ին Նոր Խարբերդի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ. Կակոյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ասատրյանը, ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի, երաժշտական և հանրակրթական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները, համայնքի բնակիչներ:

**ԼՍԵՑԻՆ-** Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավար Կ. Կակոյանի հաշվետվությունը 2011 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

**ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ**

2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Խարբերդի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 304 դիմում, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 4000 տեղեկանք, ստացել 50-ից ավելի պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները: Ծաբաթը երկու անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չնափագրման, սահմանների ճշտգրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել թունաքիմիկատներ:

2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ՝ 1780.4 հազար դրամ.

բ/ գույքահարկ՝ 2685.0 հազար դրամ.

գ/ տեղական տուրք՝ 1380.0 հազար դրամ.

դ/ ոչ հարկային եկամուտներ՝ 1476.0 հազար դրամ:

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

հանդիսավորությանը նշվել է մարտի 8-ը՝ կանանց միջազգային օրը, մայիսի 9-ը՝

Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 2290.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն.

Հուղարկավորության նպաստ՝ 1450.0 հազար դրամ.

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 10800.0 հազար դրամ.

Երաժշտական դպրոցին 4200.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է՝ 2800.0 հազար դրամ.

Բարեկարգվել և մասնակի ասֆալտապատվել են համայնքի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ փողոցների որոշակի հատվածներ:

2011 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսված է գազի ֆիկացնել նոր թաղամասի 4 փողոց:

Համայնքի հիմնախնդիրներից է գյուղամիջյան ճանապարհների բարեկարգումը, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգումը, նոր թաղամասերում էլեկտրական ենթակայանների տեղադրումը:

Ընթացքում են բուժամբուլատորիայի շենքի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:



Կ.ԿԱԿՈՅԱՆ